Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «2025 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 370-Ն որոշմանը կից 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2025 թվականի համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերի փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է բյուջեի վարչական և ֆոնդային մասերում առկա տարեսկզբի մնացորդը բյուջեի մուտքերում ներառելու և ծախսերին վերաբաշխելու անհրաժեշտությամբ:

Մասիս համայնքի բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմում է 1 595 349 969 դրամ 50 լումա, որից վարչական մասի մնացորդը՝ 1 277 971 860 դրամ 60 լումա, ֆոնդային մասի մնացորդը՝ 317 378 108 դրամ 90 լումա: Ֆոնդային մասում ֆինանսավորված սուբվենցիայի մնացորդը՝ 218 968 522 դրամ, ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 27"12"2024թ"թիվ 2060-Ն որոշմամբ 2025 թվականին Մասիս համայնքում բնապահպանական ծրագիր իրականացնելու համար նախատեսված 21 773,6 հազար դրամ կապիտալ սուբվենցիա:

2025 թվականի համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդն ամբողջությամբ տեղափոխվում է բյուջեի ֆոնդային մաս՝ համաձայն «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի «բ» կետի, համայնքի ավագանու որոշմամբ սահմանված ծախսերի ֆինանսավորման համար:

Առկա խնդիրների նկարագրությունը

2025 թվականի բյուջեի վարչական մասում անհրաժեշտ է ներառել հետևյալ ծախսերը.

- Համայնքապետարանին պատկանող թվով երկու ծառայողական ավտոմեքենայի վրա տեղադրվել է հեղուկ գազ, որոնց տարեկան ծախսը հոգալու համար անհրաժեշտ է 1 330,0 հազար դրամ
- 500,0 հազար դրամ աջակցություն տրամադրելու խնդրանքով համայնքապետարան է դիմել «Ապահով Անկյուն» ՀԿ-ն, որն իրականացնում է «Երկխոսության հաստատման զորեղացումը ԵՐԻՏԱՍԱՐԴ-ՏԻՄ համագործակցության մեջ» ծրագիրը:

2024 թվականին կնքված թվով երկու պայմանագրի ավարտման ժամկետներով պայմանավորված անհրաժեշտ է բյուջեում նախատեսել"

- Մասիս համայնքում նոր կառուցված գազատարների չափագրման ծառայության համար 2 915,0 հազար դրամ
- Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և սպասարկման ծառայության համար 2 721,9 հազար դրամ:

2025 թվականի բյուջեի ֆոնդային մասի ծախսերում անհրաժեշտ է ներառել 2024 թվականին կնքված պայմանագրերով կատարվող համայնքային ծրագրերը:

2023-2024թթ մեկնարկած սուբվենցիոն ծրագրերի շարունակականությունն ապահովելու, ինչպես նաև համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերն իրականացնելու համար նախատեսվող ծախսերը ներկայացված են տեղեկանքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների

Հազար դրամ

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Վարչական մասի Ծախսեր	Ֆոնդային մասի Ծախսեր	Ֆոնդային մասի Մուտքեր
				Եկամուտներ				
1				**Բյուջեի ֆոնդային մասի տարեսկզբի մնացորդ**				1 595 349,969-50
2				**Կապիտալ սուբվենցիաներ**				218 968,522
3				**Բնապահպանական ծրագիր իրականացնելու համար կապիտալ սուբվենցիա**				21 773,6
				Ծախսեր				
4	01	1	1	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Տրանսպորտային նյութեր/հեղուկ գազ/	4264	1 330,0		
5				Վարչական սարքավորումներ	5122		6 000,0	
6				**Նախագծահետազոտական ծախսեր.**Համայնքապետարանի վարչական շենքի հարակից տարածքում վարչական մ/շ և պահեստի կառուցման, տարածքի բարեկարգման	5134		700,0	
7				փորձաքննություն	5134		100,0	
8				Ազատաշեն բնակավայրում թեթև կոնստրուկցիաներով վարչական նստավայրի կառուցման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		500,0	

9				փորձաքննություն	5134		50,0	
10	**01**	**6**	**1**	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	-7 466,9		
11				Նվիրատվություն հասարակական կազմակերպություններին	4819	500,0		
12				Այլ սարք սարքավորումների ձեռք բերում	5129		2 106,96	
13	**04**	**2**	**4**	**Ոռոգում.** Մասիս համայնքում ոռոգման համակարգերի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ /համայնքային մաս/	5112		-80 000,0	
14				Մասիս համայնքում ոռոգման համակարգերի կառուցման և հիմնանորոգման՝ աշխատանքներ /համայնքային մաս/	5113		80529,4	
15				Մասիս համայնքում ոռոգման համակարգերի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ /սուբվենցիոն մաս//	5113		1 150,805	
16	**04**	**3**	**2**	**Նավթամթերք և բնական գազ.** Մասիս համայնքում նոր կառուցվող գազատարների չափագրման ծառայություն	4241	2 915,0		
17				Մասիս համայնքում գազաֆիկացման աշխատանքներ /սուբվենցիոն մաս/	5112		130 076,108	
18				Այնթապ բնակավայրի 13 և 14 փողոցների նրբանցքի և Արբաթ բնակավայրի վարչական նստավայրի գազաֆիկացման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		200,0	
19				փորձաքննություն	5134		20,0	
20				Ղուկասավան բնակավայրի Երևանյան փողոցի գազաֆիկացման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		400,0	
21				փորձաքննություն	5134		40,0	
22	**04**	**5**	**1**	**Ճանապարհային տրանսպորտ.** Մասիս համայնքում փողոցների ասֆալտապատման աշխատանքներ/համայնքային մաս/	5113		788 491,4	
23				Մասիս համայնքում ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ/սուբվենցիոն մաս/	5113		59 009,286	
24	**06**	**1**	**1**	**Բնակարանային շինարարություն.** Մասիս համայնքում բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում /սուբվենցիոն մաս/	5113		8 231,572	
25				Նոր Խարբերդ բնակավայրի 1-ին փողոցի 1-ին և 2-րդ շենքերի բակերի բարեկարգման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		500,0	

26				փորձաքննություն	5134		50,0	
27	06	2	1	**Համայնքային զարգացում.** Համայնքային զարգացման ծրագրերի նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		616 957,829-50	
28				Բնապահպանական ծրագրի նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		21 773,6	
29	06	3	1	**Ջրամատակարարում.** Մասիս համայնքում ջրամատակարարման համակարգի կառուցում	5112		-6 597,0	
30	06	4	1	**Փողոցների լուսավորում.** Փողոցների լուսավորման համակարգի սպասարկում	4251	2 721,9		
31				Մասիս համայնքում լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ /համայնքային մաս/	5112		22 739,8	
32				Մասիս համայնքում լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ /սուբվենցիոն մաս/	5112		20 500,751	
33	07	6	1	**Առողջապահություն.** Մարմարաշեն բնակավայրի ամբուլատորիայի նորոգման աշխատանքներ	5113		650,0	
34	08	1	1	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Ղուկասավան բնակավայրում կենտրոնական այգում զրուցարանի կառուցում և տեղադրում	5112		850,0	
35				Մարմարաշեն բնակավայրում մինի ֆուտբոլի դաստի կառուցում	5112		-30 000,0	
36				Ղուկասավան բնակավայրում կենտրոնական այգու հիմնանորոգման աշխատանքներ	5113		5 339,21	
37				Դաշտավան բնակավայրի կենտրոնական այգու հիմնանորոգում	5113		8 980,97	
38				Համայնքում կանգառների ձեռք բերման և տեղադրման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		500,0	
39				փորձաքննություն	5134		50,0	
40	08	2	3	**Մշակույթի տներ.** Մասիս համայնքի բնակավայրերում մշակույթի տների նորոգում	5113		-60 000,0	
41				Մասիս համայնքի հասարակական շենքերի կառուցման և հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		9 960,0	
42				փորձաքննություն	5134		845,0	
43	09	1	1	**Նախադպրոցական կրթություն.** Մասիս համայնքում մանկապարտեզների կառուցում և կապիտալ նորոգում	5113		224 836,4	
44				Դաշտավան բնակավայրի մանկապարտեզի գազաֆիկացման և ջեռուցման համակարգի անցկացման	5134		500,0	

				նախագծանախահաշվային աշխատանքներ				
45				փորձաքննություն	5134		50,0	
						0,00	***1 836 092,091-50***	***1 836 092,091-50***
				Ընդամենը				

2025 թվականի բյուջեի փոփոխությունների արդյունքում ֆոնդային մասի եկամուտները և ծախսերը կավելանան 1 836 092,091 դրամ 50 լումայով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ